

ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՐԱՔԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՂԱՁԱՅՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Բանասիր. գիտ. թեկնածու Ս. Ա. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Հայերենում այլ լեզուներից կատարված փոխառությունների համակողմանի ուսումնասիրությունները կարևոր են տարբեր առումներով, քանի որ դրանք նպաստում են պարզաբանելու մեր լեզվի պատմական զարգացման փուլերի ժամանակագրական հաջորդականությունը, օտար ազդեցություններով պայմանավորված փոփոխությունները:

Հայերենում առկա փոխառյալ տարրերի վերաբերյալ կան արժեքավոր բազմաթիվ աշխատություններ: Հայերենի՝ արաբերենից փոխառված բառաշերտի վերաբերյալ ուսումնասիրությունը հիմնականում սահմանափակվում է նրա ստուգաբանությամբ և բառացանկերի ներկայացմամբ: Որոշ հետազոտություններում նաև անդրադարձ կա արաբերեն փոխառյալ բառերի՝ լեզվաբանական տարբեր մակարդակներին առնչվող դրսևորումներին: Այն, սակայն, հիմնականում նկատելի է հայերենի տվյալ լեզվական երևույթի քննության համատեքստում և ինքնուրույն, համակարգային բնույթ չի կրում:

Արաբերեն փոխառությունները վկայված են հայերենի պատմական զարգացման հատկապես միջնադարյան շրջանում: Ավելին, նշվում է, որ միջինհայերենյան փոխառությունների մեջ քանակական առումով նախևառաջ աչքի են ընկնում արաբերեն բառերը, որոնցով պարզապես ողողված են գեղարվեստական և գիտական մի շարք ինքնուրույն և թարգմանական գործեր. այդ բառերը կազմում են միջին հայերենի փոխառությունների ճնշող մեծամասնությունը²²: Ըստ Հ.Աճառյանի՝ միջնադարյան արաբական փոխառությունների թիվն անցնում է յոթ հարյուրից²³:

Ստորև, միջնադարյան մատենագրությամբ ավանդված արաբերեն փոխառյալ բառերի հիման վրա²⁴, փորձենք ներկայացնել նրանցում արաբերենի բաղաձայնական համակարգի արտահայտման առանձնահատկությունները:

²² Ռ. Ս. Ղազարյան, Լեզվաբանական ուսումնասիրություններ, Ե., 2010, էջ 163, 165:

²³ Հ.Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս 2, Ե., 2013, էջ 188:

²⁴ Միջին հայերենի շրջանում կատարված արաբերեն փոխառությունները և նրանց ստուգաբանություններն առանձնացրել ենք ըստ Հ.Աճառյանի «Հայերեն արմատական բառարանի» (հհ. Ա-Դ, Ե., 1971-1979): Տե՛ս նաև Հ.Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս 2, Ե., 2013: «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», հ. Բ., Ե., 1972:

Միջին հայերենը, ինչպես հայտնի է, բնութագրվում է լեզվաբանական տարբեր մակարդակներում առկա բազմաձևություններով, որը պայմանավորված է նրա՝ չմշակված և խիստ կանոնարկված չլինելու, բարբառային բաժանվածության հիմքեր ունենալու և համընդհանուր գործածվածություն չունենալու հատկանիշներով²⁵: Դրանք բնորոշ են միջին հայերենի հնչյունաբանական, տվյալ դեպքում՝ բաղաձայնական համակարգին ևս. նրանում առանձնանում են այս համակարգի բնութագրման էական չափորոշիչներ համարվող *հպական* և *շփական* բաղաձայների տարբեր օրինաչափ փոփոխություններ: Մասնավորապես, ձայնեղ հպականները հին հայերենի՝ գրաբարի համապատասխան հնչյունների համեմատությամբ բառի նույն դիրքում մի դեպքում մնում են անփոփոխ, մյուս դեպքում տեղի է ունենում ձայնեղների խլացում, մի այլ տարբերակում՝ շնչեղ խլացում: Ինչ վերաբերում է խուլ հպականներին, ապա նրանք մնում են անփոփոխ կամ ենթարկվում են խլացման²⁶:

Արաբերենից կատարված փոխառություններում առավել նկատելի են փոխառու լեզվի վերոնշյալ համարժեք բաղաձայնների՝ փոխառու լեզվում արտահայտման երկու ձևեր. մի դեպքում դրանք, դատելով վկայված գրավոր աղբյուրներից, մնում են անփոփոխ, իսկ մյուս դեպքում հնչյունական օրինաչափությամբ ենթարկվում են միջինհայերենյան, ավելի ստույգ՝ կիլիկյան հայերենին բնորոշ, ձայնեղների խլացման և խուլերի ձայնեղացման՝ վերը նշված տեղաշարժ-տեղափոխության օրենքին²⁷:

1. Այսպես՝ առաջին դեպքում արաբերենի ձայնեղ *b* հպականի համար վկայված են *բազազ* «կերպասավաճառ» - *bazzāz*²⁸ «կտավավաճառ, կտավագործ», *բուխար* «գոլորշի» - *būxār*, *ռոքեկ* «ասպանդակ» - *rikāb*, *կուռաբ* «ագռավ» - *ḡurāb* համապատասխանությունները, իսկ հնչյունական երկրորդ օրենքով (որն ավելի հաճախադեպ է)՝ *b>պ. պղպղայ* «թութակ» - *babḡā*, *պուրծ* «բուրգ, աշտարակ» - *burj*, *աճպարար* «ծեռնածու» - *ajab* «զարմանալիք», *ջուսպ* «պատասխան» - *jawāb*:

²⁵ Ավելի մանրամասն տե՛ս «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», էջ 32:

²⁶ Նույն տեղում, էջ 28:

²⁷ Հ.Մուրադյան, Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 1, Ե. 1982, էջ 305:

²⁸ Արաբերեն հնչյունների տառադարձման համար օգտագործվել է Encyclopedia of Arabic Language and Linguistics-ի Baskerville MT for Brill 02 տառադարձման համակարգը: Արաբերեն բառերի տառադարձումը ճշգրտվել և միօրինակացվել է (որոշ դեպքերում ներկայացված բառային միավորներում տառադարձմամբ չեն առանձնացվում երկար ձայնավորները, էմֆատիկ բաղաձայնները և այլն):

Ուշագրավ է նաև, որ քիչ չեն միջին հայերենին հատուկ, նույն բառային միավորի բազմաձևությունները՝ *բասար* (Կ. Երզնկացի) և *պասար* «միտք, բանականություն» - *bašar* «1.տեսողություն, 2.մտքի կորովություն», *ակրաբադին* (Մխիթար բժիշկ) և *ախրապապին* (Ա.Ամասիացի) «բժշկարան» - *aqrābāzīn*²⁹, *լաբլաբ* (Մխ. բժիշկ) և *լապլապ* (Ա. Ամասիացի) «բաղեղ» - *lablāb* և այլն: Հնչյունափոխված ձևերը միջին-հայերենյան ավելի ուշ (կիլիկյան) շրջանի վկայություններ են:

2. Նույն օրինաչափություններն են գործում արաբերենի ձայնեղ d-ի դեպքում.

ա) հնչյունի պահպանում՝ *դաւաբ* «ոչխար» - *dawwāb* «անասուններ» (Եգ. թ.՝ *dābba* «չորքոտանի կենդանի»), *դուրճ* «խորշերի բաժանված արկղ» - *durj* «դարակ», *ադէմ* «ներկած սեկ կամ կաշի» - *adīm* «կարմիր ներկած կաշի», *ադադ* «շարժուն քանոն» - ‘*šda* «շարժուն քանոն, անկյունաչափ»,

բ) հնչյունի խլացում՝ *դոււհա* «ծխախոտ» - *duxān*, *մուներիկ* «մի բան բարձրաձայն հայտարարող» - *munādī*, *թրպուր* «բուսատեսակ» - *turbid*,

գ) զուգաձևություն՝ *դարշիշան / փարշիշան* «փշոտ բույս» - *dār šiš‘ān*, *զեհեւ / զեհիդ* «մահմեդական կրոնավոր» - *zāhid* «ճգնավոր, կրոնավոր», *թմրհնդի/թմրհնդի* «հնդկարմավ» - *tamra*-[ul]-*hindī*:

Ինչպես երևում է բերված օրինակներից՝ հնչյունի պահպանումը կամ հնչյունափոխությունը պայմանավորված է ոչ թե բառի կազմում նրա գրաված դիրքով, այլ հայերենի՝ պատմական զարգացման տվյալ փուլին բնորոշ հնչյունական յուրահատկություններով:

Ինչպես վերը նշեցինք, ի տարբերություն ձայնեղ և խուլ հպականների, շնչեղ խուլերը հիմնականում վկայված են առանց փոփոխության, որը նկատելի է նաև փոխառյալ բառերի օրինակով. *t* - *թեսպիր* «միջոց, հնար» - *tadbīr*, *թիմսահ* «կոկորդիլոս» - *timsāh*, *k* - *աքլիլմէլիք* «բուսատեսակ՝ թագավորապսակ» - *iklīl*-[ul]-*malik*, *շրիք* «վաճառականության մեջ ընկեր» - *šarīk* «ընկեր, գործընկեր» և այլն:

Արաբերենը չունի հայերենին և նրա՝ այս շրջանին հատուկ *զ*, *կ*, *պ*, *փ* հպականների, կիսաշփականների *ձ*, *ծ*, *ց* լծորդական շարքի, *ճ* և *չ* կիսաշփականների համարժեքները, և, բնականաբար, փոխառյալ բառերում բաղաձայնական այս խումբը չի հանդիպում: Արաբերենի միակ ձայնեղ կիսաշփական *j*-ն մի քանի բառում արտահայտվել է

²⁹Օրինակների մեջ հանդիպում են նաև այնպիսիք, որոնք միջնորդավորված փոխառություններ են, ինչպես տվյալ բառը՝ հունարենից, սակայն արաբերենի միջոցով է անցել հայերենին, ուստի և այստեղ դիտարկում ենք:

հայերենին համարժեք ջ-ով. *ջամ* «գումար, համագումար» - jam³⁰, *ջումլայ* «գումար, ամբողջություն» - jumla, *ջուսայ* «պատասխան» - jawāb, *ջնիբայ* «ծի» - janība, *հաջամ* «վարսավիր, սափրիչ» - hajjām, *խալանջ* «բուսատեսակ» - xalanj³⁰:

Ի տարբերություն բերված օրինակների՝ բազմաթիվ են այն բառերը, որոնցում տեղի է ունեցել միջին հայերենի կիլիկյան շրջանի բաղաձայնական համակարգին բնորոշ ձայնեղների խլացումը՝ արաբ. *j* > հայ. ճ, որը գործում է բառի բոլոր դիրքերում. *ճիպ* «վիզ, պարանոց» - jīd «պարանոց, հատկապես՝ մանյակ կախելու մասը», *աճպարար* «ձեռնածու» - ‘ajab «զարմանալիք», *թաշանուճ* «ջղածություն» - tašannuj և այլն: Մեկ բառում՝ *ալաժահրի* «ներկատու բույս» (al- jahrit), դիտվող արաբ. *j* > հայ. ժ հնչյունափոխությունը, ըստ Հ.Աճառյանի, պետք է համարել ոչ թե հայերենում տեղի ունեցած երևույթ, այլ դա հատուկ է արաբերենի բարբառային այն տարբերակին, որից կատարվել է փոխառությունը³¹: Իսկ *ախլսաչ* «բուսատեսակ» (axarsāj) բառի դեպքում արաբ. *j* > հայ. չ հնչյունափոխության վերաբերյալ նշում է, որ «...պետք է չ-ն դարձնել ջ, քանի որ արաբերենը չ չունի»³²: Հնարավոր է, որ այս օրինակում առկա է գրչագրական սխալ, թեև մատենագրությունը բավական տվյալներ է հաղորդում ձայնեղների՝ նաև շնչեղ խլացման վերաբերյալ, հատկապես՝ բառամիջի և բառավերջի դիրքերի համար (օր՝ *քուրդչն թանկ ազիզին*)³³:

3. Բաղաձայնական մյուս ենթախումբը շփականներն են, որոնք միջին հայերենի շրջանում հպական բաղաձայնների համեմատությամբ ավելի կայուն վիճակ էին ներկայացնում: Դա երևում է նաև փոխառություններից, որոնցում փոխառու լեզվի համապատասխան բաղաձայնները գրեթե միշտ համարժեքորեն են արտահայտված: Այսպես՝ արաբ. *s* = հայ. *ս*. *սլեհ* «զենք», *ալսուս* «բժշկական բույս» - al-sūs «մատուտակ», *խսար* «պաշարում» - hisār և այլն: Բազմաթիվ օրինակներով արձանագրված այս օրինաչափությունից բացառություն են *մալազ* «անչափահաս մարդ» - malas, *զահթեր* «դեղի տեսակ» - sa‘tar «ծոթրին» բառերը, որոնցում առկա է *s*-ի ձայնեղացում: Արաբերենի ձայնեղ *z* - ն ևս անփոփոխ արձանագրված է բառի բոլոր դիրքերում՝ *զուկակ* «փողոց» - zuqāq, *զահրայ* «վայրի մեխակ» - zahra «ծաղիկ», *մազար*

³⁰ Օրինակները հիմնականում սահմանափակվում են վերը նշվածներով:

³¹ Հ.Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, էջ 90:

³² Նույն տեղում., էջ 98:

³³ «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», Բ, էջ 116:

«աճուրդ» - mazād, *խապազ* «հացագործ» - xabbaz և այլն: Մեզ հաջողվեց գտնել վերջինիս հնչյունափոխման մեկ օրինակ՝ *շահմիանդալ / շահմիանսրալ* «վայրի ձմերուկ» - šahma «միջուկ» + hanzall «վայրի ձմերուկ»:

Գրական արաբերենը, ի տարբերություն հայերենի և նրա դիտարկվող շրջանի, չունի ձայնեղ *ժ*-ին համարժեք հնչյուն³⁴. այստեղ առկա է միայն նրա խուլ լծորդը՝ *ժ*-ն, որը համապատասխանում է հայերենի *շ*-ին. *շամս* «արեգակ» - šams, *շէր* «ժողովրդական երգ» - šir «երգ, բանաստեղծություն», *հաշիշ* «կանեփատի» - ḥašīš «թմրեցուցիչ բույսի տեսակ» և այլն:

Բազմաթիվ օրինակներում արաբերենի *ժ*-ն, փոխառյալ բառերում հայերենի նույն հնչյունին համարժեքությամբ հանդերձ, մեկ-երկու բառում հնչյունափոխվել է հայերենի *ս*-ի. *արտանիսա* «առյուծաճանկ բույս» - art‘nišā, *ասիսիս* «բուսատեսակ» - ašxiš: Սա, ըստ Հ.Աճառյանի, տեղի է ունեցել այն հանգամանքի պատճառով, որ արաբերեն բառում *ժ* տառի ելակետը ջնջվելով՝ դարձել է *ս*, որի համար հայերենում տառադարձվել է *ս*-ով³⁵: Այլ կերպ ասած՝ այստեղ գործ ունենք ոչ թե հնչյունափոխական երևույթի, այլ տառադարձման կամ գրչագրական վրիպակի հետ: Մեկ այլ՝ *ժողով* «գեղամունք» - šuḡl բառում արաբ. *š* > հայ. *ժ* անցումը, ըստ Աճառյանի, հարևան ձայնեղ *ղ*-ի ազդեցությամբ *շ*-ի հնարավոր ձայնեղացման արդյունք է³⁶: Մյուս բոլոր փոխառյալ բառերում արաբերենի *ժ*-ն, կայուն կերպով պահպանելով իր հնչյունական արժեքը, տառադարձվում է *շ*-ով:

Արաբերենում գործառում են ձայնեղ *ց* և նրա լծորդ խուլ *չ* փականները: Հայերենի խնդրո առարկա շրջանին ևս բնորոշ է *ղ / խ* լծորդական զույգի առկայությունը. միջին հայերենում *ղ* գրով արտահայտված հնչյունն այլևս չուներ իր հին արժեքը (որպես գրաբարի *լ* ձայնորդի կատկային տարբերակ)³⁷: Արաբերենից փոխառված, միջնադարյան մատենագրությամբ ավանդված բառերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ *չ* բաղաձայնը փոխառու լեզվում հետևողականորեն արտահայտվում է իր համարժեքով՝ գործառելով բառի բոլոր դիրքերում, ավելի հաճախ՝ բառասկզբում, իսկ երբեմն՝ բառավերջում. *խապազ* «հացագործ» - xabbaz, *խազիրան* «գազի փուշ» - xayzarān, *բուխար*

³⁴ Տե՛ս նույն տեղում:

³⁵ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, էջ 269, 342:

³⁶ Նույն տեղում., էջ 231:

³⁷ «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», հ. Բ, էջ 128:

«գոլորշի» - būxār, *խոխ* «դեղծ» - xauxa և այլն: Որպես նշված օրինաչափությունից շեղում՝ գտնում ենք $x > h$ հնչյունափոխությամբ *յրուհա* «ծխախոտ» - duxān, *մահրասայ* «քրիստոնյաների վարդապետ» - marxasa և զուգաձևությամբ՝ *խամալօն/համալուն* «բուսատեսակ» - xamālyūn փոխառությունները: Միջնադարյան շրջանի հայերեն որոշ բառերում հանդիպող *խ>h* անցումը համարվում է բարբառային հնչյունափոխության մասնակի դրսևորում (այն հատուկ էր Վասպուրականի և նրան հարող շրջանների հայերեն խոսվածքներին) և ոչ բնութագրական միջին գրական հայերենի համար³⁸: Փոխառյալ այս մի քանի բառերը ևս, կարծում ենք, դրա արտահայտություններն են:

Ինչ վերաբերում է արաբերենի ձայնեղ *ğ*-ին, ապա փոխառություններում հիմնականում արտահայտվել է հայերենի այս շրջանում հնչողությամբ իրեն արդեն համարժեք *ղ*-ով (բառավերջի դիրքում նրա գործառության օրինակ, սակայն, չգտանք). *ղար* «դափնի» - ġār, *ղազա* «կոփվ, պատերազմ» - ġazā «պատերազմ՝ հանուն իսլամական կրոնի», *մղլակ* «դուռը փակելուն ծառայող փայտի կամ երկաթի կտոր» - miġlāq, *մշղլի* «գբաղվել» - mašġil «գբաղված» և այլն: Փոխառյալ երկու-երեք բառում՝ բառասկզբում, առկա է *ğ>խ* հնչյունափոխություն. *խալապայ* «կոփվ, շփոթություն» - ġalaba «բռնություն», *խուխայ* «ամբոխ, հարձակում» - ġauġā «կոփվ, խռովություն», իսկ մի քանի բառեր ունեն զուգաձևեր՝ *խալապ/ղալապ* (գրված *ղաղապ*) «սխալ, վրիպակ» - ġala, *խափիթ/ղափեթ* «երեսնակ» - ġāfat: Ենթադրվում է, որ *խ*-ով ձևերը համեմատաբար ավելի վաղ շրջանի (մինչև 9-10-րդ դդ.) փոխառություններ են, երբ *ղ*-ն դեռ *լ*-ի արտասանական մի տարբերակն էր, իսկ օտարալեզվյան *ğ*-ն փոխարինվել էր արտաբերմամբ իրեն ամենամոտ հնչյունով՝ *խ*-ով: 10-11-րդ դդ. վիմական արձանագրություններում առկա են փոխառյալ բառեր, որոնցում արաբերեն *ğ*-ի դիմաց հանդիպում են հայերենի *ղ*-ով և *խ*-ով զուգաձևեր (օր.՝ *Աբլխարիփ/Աբլղարիպ*)³⁹:

Արաբերենի հաջորդ՝ խուլ *f* շփականը փոխառություններում արձանագրվել է երկու տարբերակով՝ *փ* և *ֆ* բաղաձայնների միջոցով, որոնք փոխառյալ բառերի կազմում կիրառության սահմանափակում չունեն. $f > \Phi$ ՝ *ֆուլան* «այսինչ, ոմն» - fulān, *ղաֆիլ* «անգետ, անտեղյակ» - ġāfil, *լեհեֆ* «ծածկոց» - lihāf «վերմակ, սավան» և այլն և $f > \Phi$ ՝ *փիլաֆ* «երկինք, երկնականար» - falak, *ռափիա* «ընկեր, բարեկամ» - raḥīq,

³⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 133-134:

³⁹ Նույն տեղում, էջ 130:

խլեփ «անուշահոտ ուռենի» - xilāf և այլն: Կան նաև զուգաձևեր՝ *փարփ/ֆարփ* «անզույգ, կենտ» - fard, *խալիփայ/խալիֆայ* «արաբների ամիրապետը» - xalīfa, *սփուփ/սֆուֆ* «դեղափոշի» - sufūf և այլն:

Հայտնի է, որ հին հայերենի հնչյունական համակարգում *ֆ*-ն բացակայում էր, և բոլոր այն դեպքերում, երբ օտար փոխառություններում այս հնչյունը հանդիպում էր, իր ձայնաբանական հատկանշի համաձայն, նույնացվում և տառադարձվում էր *փ*-ով կամ *ա* ձայնորդ-բաղաձայնին մոտ մի հնչյունով⁴⁰: Խուլ շփական *ֆ* հնչյունի գրավոր առաջին վկայություններն արձանագրվում են 13-րդ դ., և ենթադրվում է, որ նրա առաջացումը նախապես տեղի է ունեցել հայերենի արևմտյան բանավոր-խոսակցական տարբերակներում՝ հատկապես կիլիկյան հայերենում. կիլիկյան մատենագրության մեջ *ֆ* - ն մշտապես տառադարձվում է *ֆ*-ով, մինչդեռ նույն դարի այլ աղբյուրներում հիմնական սկզբունքը *ֆ*-ն *փ*-ով արտահայտելն է⁴¹: 14-րդ դ. սկսած՝ գրավոր լեզվում փոխառյալ, այդ թվում նաև՝ արաբերենից, բառերի օտարալեզվյան *ֆ*-ի դիմաց բացառապես սկսում է գործածվել *ֆ*:

Արաբերենի մյուս խուլ շփականը՝ *հ*-ն, արտաբերմամբ համապատասխանելով հայերենի *հ*-ին, նույնացել է վերջինիս հետ, գործառում է բառի բոլոր դիրքերում, ավելի հաճախ՝ բառամիջում. *հաւայ* «օդ, եղանակ» - hawā, *մահր* «օժիտ» - mahr, *զահրայ* «վայրի մեխակ» - zahra, *շապահ* «փշոտ բույսի տեսակ» - ābah և այլն: Ուշագրավ է, որ էապես ավելի շատ են արաբերենի կոշտ *է*-ով փոխառությունները, որոնց ստորև կանդրադառնանք:

Բաղաձայնների հաջորդ ենթախումբը ձայնորդներն են: Դրանցից արաբերենի *մ* և *ն* ռնգայինները, որոնք համապատասխանում են միջինհայերենյան *մ*-ին և *ն*-ին, որպես կանոն արտահայտվում են վերջիններովս՝ գործառելով բառի բոլոր դիրքերում. *մ*- *մնիրայ* «մզկիթի աշտարակ» - mināra, *դաման* «հարկ, տուրք» - amān «վնասի հատուցում», *ալամ* «դրոշ», այլև *նափար* «հայացք» - naẓar, *ջնիբայ* «ծի» - janība, *ռահան* «անուշահոտ բույս» - raiḥān և այլն: Միակ բացառությունը հայերենին հատուկ, փոխառյալ բառերի դեպքում ևս կիրառելի շրթնային հպականի կողքին *ն* > *մ* առնմանական հնչյունափոխությունն է. *ամպած* «հնդկական պտուղ» - anbaj, *մամբար* «մզկիթի բեմը՝

⁴⁰ Հ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 257:

⁴¹ Տե՛ս «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», հ. Բ, էջ 125:

ատյանը կամ խորանը» - minbar, *յամբար* «անուշահոտ ծաղիկ» - ‘anbar և այլն:

Արաբերենից կատարված տասնյակ փոխառություններում փոխատու լեզվի *l* ձայնորդը կայուն կերպով արտահայտվում է միջինհայերենյան *l* հնչյունով. *լաղապ* «տիտղոս, պատվանուն» - laqab, *ալիկ* «անասունի կեր» - ‘alīq, *ալանի* «հայտնի» - ‘alanī «հրապարակային» և այլն: Սա բացատրվում է այն հանգամանքով, որ արաբական փոխառությունների մեծագույն մասը կատարվել է 12-րդ դ. սկսած, այսինքն՝ այն ժամանակ, երբ վաղուց կայունացել էր *ղ-ի*՝ շփական բաղաձայնի արժեք ձեռք բերելու հնչյունական գործընթացը, և այն այլևս *լ-ի* մի տարբերակը չէր: Միայն մի քանի բառում, որոնք ավելի վաղ շրջանի փոխառություններ են, հանդիպում են *l-ի*՝ *ղ-ով* արտահայտման տարբերակները. *ղաղապ* «սխալ, թերություն» - ḡalaṭ, *խաղուկ* «քրքումի յուղ» - xuṣūq, *կոպղեալ* «կողպված» - quṣl «կողպեք, փականք», *սաղաաթ* «նվեր, ընծա» - ṣalāwāt, *մաղապ* «ծաղկի տեսակ» - malāb, *տաղակ* - «ապահարգան» - ṭalāq: Ավելի ուշ շրջանում սրանցից որոշներն արդեն ունեին *խալապ*, *խալուկ*, *տալախ* ձևերը:

Փոխատու լեզվի հաջորդ ձայնորդը՝ *r-ն*, որն իր հնչարտաբերական հատկանիշներով ավելի համապատասխանում է հայերենի *ռ-ին*, միջինհայերենյան փոխառություններում արտահայտվել է *ր-ով* և *ռ-ով*, բառերի մեծ մասի դեպքում՝ առաջինով: Նկատելի են հետևյալ օրինաչափությունները: Քանի որ միջին հայերենում (ինչպես նաև հայերենի պատմական զարգացման ողջ ընթացքում) բառասկիզբը *ր-ի* համար բացառված դիրք էր, ուստի բոլոր այն բառերը, որոնք սկսվում են արաբերենի *r-ով*, փոխառու լեզվում արտահայտվում են *ռ-ով*՝ *ռայիս* «գլխավոր, պետ» - ra’īs, *ռայ* «դրոշակ» - rāya, *ռեհ* «հողմ, քամի» - rīḥ և այլն:

Մյուս օրինաչափությամբ *ռ* են ստանում բոլոր այն բառերը, որոնք արաբերենում արտահայտվում են բաղաձայնի տևականությամբ, տվյալ դեպքում՝ կրկնակ *ր-ով*. *դուռեճ* «սալամբ (մի տեսակ թռչուն)» - durraj, *շառ* «ամբոխ, խռովություն» - šarr «չար, չարիք», *դուռայ* «ասիական իշխանների լայն և հաստ հագուստը» - durrā’a և այլն: Հիշյալ օրենքից կան որոշ բացառություններ, ինչպես՝ *զառնաթ* «բուսատեսակ» - zarnab, *կուռաթ* «ագռավ» - ḡurāb: Ինչ վերաբերում է *ր-ին*, ապա բառամիջի և բառավերջի դիրքերում արաբերենի *r-ն* միշտ արտահայտվում է վերջինիս միջոցով. *հարամի* «ավագակ» - ḥaramī, *բուխար* «գոլորշի» - būxār, *թեպալիր* «միջոց, հնար» - tadbīr և այլն:

Կան նաև հատուկենտ գուգաձևեր՝ *աճուռ/աճուր* «բուսատեսակ» - ‘ajūr «վարունգի տեսակ», *ապուր/ապուռ* «տարանցիկ ապրանքների վրա դրված հարկ» - ‘abara «անցնել» բայից:

Փոքրաթիվ բառեր գործածված են նաև *ը* ձայնավորային հենարանով. *ըռբեկ* «ասպանդակ» - rikāb, *ռուպ/ըռուպ* «օշարակ» - rubb, *ռուպ/ըռուպ* «քառորդ» - rub‘, *ըռափիկ/ռափիկ* - rafīq: Սրա պատճառն այն է, որ հայկական որոշ տարածքների լեզվում *ռ*-ն շարունակում էր բառասկզբի համար բացառված դիրք լինել (ինչպես հին հայերենում էր), ուստի նրանից առաջ լսվում էր թույլ *ը*, որն արտահայտվում էր նաև գրությամբ⁴²: Լեզվական այս երևույթը այսօր ևս գործածական է արևմտյան տարածքի մի շարք բարբառներում:

Արաբերենի մյուս ձայնորդը՝ *w*-ը, միջինհայերենյան փոխառություններում բառասկզբում և բաղաձայնից հետո գրությամբ արտահայտվում է *վ* բաղաձայնով՝ *վախմ* «եկեղեցուն կտակված հող կամ կալվածք» - waqf, *վարս* «դեղնախունկ» - wars, *ճապվար* «բուսատեսակ» - jadwār, իսկ միջձայնավորային դիրքում՝ գրաբարյան *ւ* ձայնորդի միջոցով՝ *դաւիլ* «դաշնագիր, մուրհակ» - taḥwīl, *հաւայ* «օդ, եղանակ» - hawa’ և այլն:

Վերը քննության առանք արաբերենի բաղաձայն այն հնչյունախումբը, որն ընդհանրություններ ուներ միջինհայերենյան համապատասխան բաղաձայնների հետ: Փոխատու լեզվում, սակայն, կան այնպիսի բաղաձայններ, որոնք իրենց հնչարտաբերմամբ հստակ տարբերվում և ընդհանրապես բացակայում են հայերենում: Հատկանշական է, որ արաբերեն փոխառությունների հնչյունական համակարգին նվիրված մասնակի անդարդարձերում այդ բաղաձայնների մասին հիշատակումներ ևս չեն հանդիպում: Դրանցից են ձայնեղ *d* և խուլ *t* շփականները (համարժեք են անգլերենի ձայնեղ *th*-ին [ð], օրինակ՝ *this* «այս» և խուլ *th*-ին [θ], օրինակ՝ *thing* «առարկա»⁴³):

Միջնադարյան փոխառյալ բառաշերտում առաջինը հիմնականում արտահայտվել է հնչարտաբերմամբ հայերենում իրեն ամենամոտ *q* բաղաձայնով՝ *բզրուկ* «սամուխ» - bizr «սերմ», *զուռույ* «կորեկի տեսակ» - zurra, իսկ երկրորդը՝ *թ*-ով կամ *ս*-ով՝ *թուենիթ* «րոպեի վաթսուներորդ մասը՝ 1/60» - t̤ānīat, *մթխալ* «փոքր կշիռ՝ 1.5 գրամ» - mitqal, *տարասիս / տարաթիթ* «բույսի տեսակ» - tarāṭṭ միջոցով: Այս բաղաձայններն ունեցող փոխառյալ բառերը փոքր խումբ են կազմում, քանի որ այս

⁴² Մուրադյան Հ., նշվ. աշխ., էջ 221:

⁴³ Ковалев А., Шарбатов Г., Учебник арабского языка, М., 1969, էջ 22:

հնչյունները գործածության բավական ցածր հաճախականություն ունեն նաև մայր լեզվում:

Արաբերենի հնչյունական համակարգին հատուկ է նաև, այսպես կոչված, ուժգին արտաբերման՝ էմֆատիկ $\cdot$, $\cdot$ t, $\cdot$ z, $\cdot$ s բաղաձայնաշարքը: Առաջինը՝ $\cdot$ -ն, թեև արտաբերմամբ ավելի մոտ է հայերենի *դ*-ին՝ առանց ուժգնության հատկանիշի, սակայն վերջինով արտահայտվել է հատուկենտ բառերում՝ *դաման* «հարկ, տուրք» - $\cdot$ amān, *դարապ* «փողերանոց» - $\cdot$ araba «հարվածել» բայից: Ավելի հաճախ հանդիպում է $\cdot$ > *m* անցումը՝ որպես կիլիկյան բաղաձայնական տեղաշարժ-տեղափոխության օրենքի դրսևորում՝ *հոտոտ* «աչքացավի համար դեղ» - $\cdot$ hu·a·, *դափի* «մահմեդականների դատավոր» - qā·Ê, *մկրափ* «մկրատ» - miqrā·, *դարապայ* «անգամ» - $\cdot$ arba «զարկ» և այլն: Հատուկենտ բառերում հանդիպող $\cdot$ > *q* անցումը, կարծում ենք, արաբերենի բարբառային տարբերակից է անցել է փոխառու լեզվին՝ *հումայզ* «թրթնջուկ» - $\cdot$ humai·, *զարեհ* «ծովային անծանոթ խոտ» - $\cdot$ arīh: Մյուս բաղաձայնը՝ $\cdot$ t-ն, որը համապատասխանում է հայերենի *դ*-ին, որպես կանոն արտահայտվում է վերջինովս՝ *դապաղ* «պնակ» - $\cdot$ tabaq, *մդրուպ* «երգիչ, երաժիշտ» - muārib, *խասս* «հեղուկների չափի տեսակ» - qist և այլն, որոշ բառերում՝ դ-ով՝ *դաիլ* «դաշնագիր, մուրհակ» - taḥwīl, *դահնագոյն* «սիսեռագույն» - taḥīn «սուսամի յուղ» և այլն: Էմֆատիկ $\cdot$ s բաղաձայնը, որպես կանոն, արտահայտվում է հայերենյան ս-ով՝ *աճաս* «սալորի տեսակ» - $\cdot$ ajās, *սուս* «մատուտակ» - $\cdot$ sūs, իսկ $\cdot$ z-ն, հանդիպելով միայն մի քանի բառերում, *զ-ով*՝ *նափար* «հայացք» - $\cdot$ nazar, *դարազ* «ուկկումիլ ծառի պտուղը» - qaraž:

Արաբերենի հնչյունական համակարգին բնորոշ հաջորդ հնչյունը խոչակային խուլ շփական $\cdot$ h-ն է, որը, իր համարժեքը չունենալով փոխառու լեզվում, փոխարինվել է հնչարտաբերմամբ իրեն ամենամոտ՝ հայերենի *հ* բաղաձայնով. *հարամի* «ավազակ» - $\cdot$ haramī, *սէիլ* «ծովեզր, ծովափ» - sāḥīl, *ռեհ* «հողմ» - rīh «քամի» և այլն: Նշված օրինաչափությունից որպես շեղում արձանագրում ենք բառասկզբի *հ>խ* հնչյունափոխությամբ մի խումբ բառերի առկայությունը միջին շրջանի աղբյուրներում. *խալիզոն* «խխունջ» - ḥalazūn, *խիկար* «իմաստուն» - ḥīqār, *խսար* «պաշարում» - ḥisār, *խսիր* «փսիաթ» - ḥašīr և այլն:

Միջին շրջանի մատենագրության հայերեն բառերում ևս հանդիպող *h* > *խ* անցման (օրինակ՝ *հաց>խաց*)՝ որպես բարբառային երևույթի (այն առկա է Վասպուրականի տարածքի խոսվածքներում) գործառության

մոտավոր ժամանակը համարվում է 6-8-րդ դդ. սահմանագիծը⁴⁴, ուստի այն տարածվել է այդ շրջանում փոխառված արաբերեն ոչ մեծաթիվ բառերի վրա ևս:

Արաբերենի հաջորդ բաղաձայնը խոր հետնաքմային, խուլ հպական *q*-ն է, որը հայերենի *կ*-ից տարբերվում է արտաբերման տեղով և լարվածության առկայությամբ: Չունենալով միջինհայերենյան և առհասարակ հայերենյան իր համարժեքը՝ այն արաբերենի բաղաձայնական համակարգի՝ փոխառություններում ամենաբազմազան հնչյունափոխությունների ենթարկվածն է. արտահայտվել է հայերեն *կ*, *ղ* երբեմն՝ *խ* հնչյունների միջոցով, որոնք բառի կազմում գործառության դիրքի սահմանափակում չունեն. *q > կ՝ կապայ* «զգեստի տեսակ» - qabā «պարեգոտ, առջևը բաց զգեստ», *մկրատ* «մկրատ» - miqrā, *զուկակ* «փողոց» - zuqāq, *q > ղ՝ ղամար* «լուսին» - qamar, *ղալամ* «գրիչ, եղեգնյա գրիչ» - qalam, *լաղապ* «տիտղոս, պատվանուն» - laqab, *լուղաս* «լվասպան խոտ» - dūqas, *q > խ՝ խասար* «հեղուկների չափի տեսակ» - qist, *վախս* «եկեղեցուն կտակված հող կամ կալվածք» - waqf, *նապխ* «բուսատեսակ» - nabq:

Միջին հայերենի շրջանում օտարալեզվյան այս հնչյունի՝ ոչ միայն *ղ*-ով, այլ նաև *կ*-ով և *խ*-ով տառադարձելու նման տարընթերցումը համարվում է տարբեր բարբառային հիմքերի արդյունք⁴⁵: Հատուկենտ բառերում առանձնացրել ենք նաև *q > ք՝ հաքր* «արհամարիված, անարգ» - ḥaqīr, *շաք* «պատուհան» - šaqq «ճեղքվածք, ճաք», *պաքարայ* «լուծ կամ բեռ քաշող եզ» - baqara «եզ, կով» և *q > գ՝ միրուգ* «այրած» - mahīrūq անցումները:

Այսպիսով՝ ինչպես ցույց է տալիս միջինհայերենյան շրջանի արաբական մեծաթիվ փոխառությունների հնչյունաբանական քննությունը, այս լեզվի բաղաձայնական համակարգը փոխառյալ բառերի միջոցով ենթարկվել է գրեթե բոլոր այն հնչյունական երևույթներին, որոնք հատուկ էին միջին հայերենին՝ իր տարբերակներով և պատմական զարգացման փուլերով հանդերձ: Պատահական չէ նաև, որ միջինհայերենյան հնչյունների հնչյունական արժեքի որոշման կամ հավաստիացման հարցում միշտ համեմատություն է կատարվում դրանց՝ փոխատու լեզվում (լեզուներում) համարժեքների և փոխառություններում արտահայտման ձևերի միջև:

⁴⁴ Մուրադյան Հ., նշվ. աշխ., էջ 267:

⁴⁵ Նշվ. աշխ., էջ 215:

С. А. Микаелян - Система согласных среднеармянских арабских заимствований - В статье на основе среднеармянских многочисленных арабских заимствований рассматриваются особенности проявления согласной подсистемы языка-источника. Оказывается, что арабские заимствования этого периода включают в себя почти все те языковые явления, которые были характерны для среднего армянского языка - со своими вариантами и этапами исторического развития.

S. A. Miqaelyan – The Consonant System of Middle Armenian Arabic Loan Words – In the article based on a large number of Middle Armenian Arabic loanwords the manifestation peculiarities of consonant subsystem of the donor language are examined. It becomes clear that the Arabic borrowings of the period cover almost all linguistic phenomena which have been peculiar to Middle Armenain, its variants and stages of historical development.